



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Վ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

ԴԵՊԻ ՊՈԼԻՏԻՑԵԽՆԻԿԱԿԱՆ
ԴՐԱՅ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ — ԵԵՐԵՎԱՆ, 1930.

—
—
—

10. The following table gives the number of cases of smallpox reported in each State during the year 1802.

卷之三

Վ. ԱՍՎԱՇԽՐՅԱՆ


371.42

A 7
4446



ԴԵՊԻ ՊՈԼԻՏԵԿՆԱԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՑ

1726



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, — ԵՐԵՎԱՆ, 1930

ՆՎԵՐ ԱՐՏԱԿԱՐԱՔՑԱՆ
ՅԱՆՎՈՐՆԵՐԻՆ

Հր. № 169.

Գրառեպիլար № 6038 (բ):

Տիրամ 3000.

Գիտքառի առաջին տօգորան Վաղարշակավան
Պատգիր № 169

ՎՈՐԱԿՅԱԼ ԲԱՆՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

Վորակյալ աշխատանքը տարբեր հասարակա-
կան շրջանում տարբեր եւ Արտադրության մի-
ջոցների փոփոխման հետ միասին փոփոխվում
են նաև նրա ձևերն ու բովանդակությունը:
Տնտեսական-հասարակական գարաշրջանի զար-
գացման հետ փոխվում ու զարգանում ե աշ-
խատանքը, աստիճանաբար կատարելագործվելով
և սննդներով ցածր աստիճանից դեպի բարձրը,
իսկ կոմունիստական հասարակակարգում աշխա-
տանքի ներկա ձևը, ինարկե, կվոչնչանա և մի-
անգամանին կփոխվի:

Մենք նպատակ չունենք կանգ առնելու լու-
րանչուր դարաշրջանի աշխատանքի ձևերի վրա,
այլ կնշենք, թե ինչպիսի արագ փոփոխություն
են առաջ բերում մեքենաների և ելեկտրակա-
նության գլութը:

Արտադրության մեջ ելեկտրականություն գոր-
ծադրելուց աշխատանքի բոլորովին այլ լուրահա-
տուկ պարմաններ են առաջ գալիս: Մեքենալի կազմ-
վածքը զարգանում ու բարձրանում է, վորի հե-

տեանքով զարագանում և արտադրության պրոցեսը և հնարավորություն ստեղծում, վոր բանվորն ավելի ինտենսիվ աշխատանք կատարի և միաժամանակ մի քանի մեքենա ղեկավարի։ Նման ղեպքում վորակյալ բանվորի աշխատանքի ձևերը միանգամայն փոխվում են։ Մի կողմից թեթևանում և ֆիզիկական ուժի գործադրումը—կրծատվում են ձեռքի աշխատանքի պրոցեսները, իսկ մյուս կողմից բանվորից պահանջվում է զարգացում և մտավոր պատրաստականություն։

Մեքենայացման լենթարկված արտադրությունը բանվորից պահանջում է լավ գիտենալ ու հասկանալ մեքենալի կառուցվածքը և փոխանակ նրա մի մասնիկը դառնալու՝ ինքնուրույնությունից զրկվելու,—լինել նրա ղեկավարն ու տոն տվողը, նրա հրամանատարը։

Դրա հետ միասին նա պետք է լինի պարտաճանաչ, կամքի ուժի տեր և կատարած աշխատանքների համար իրեն պատասխանատու դգա։

Նման բանվորների համար մտավոր պատրաստականությունը անհրաժեշտ պարման և դառնում։ Մեքենան կանոնավոր ղեկավարելու համար անհրաժեշտ է վոչ միայն լուրացնել շարժելու պրիորներն ու կանոնները, այլև անհրաժեշտ է գիտենալ ու ըմբռնել արտադրության պրոցեսն ամբողջապես՝ իր բազմակողմանիությամբ։ Նո-

անքան լով պետք և ծանոթ լինի մեքենայի բու-
յոր մասերին, վոր նրա լուրաքանչյուր ձանի կամ
շարժումի փոփոխությունների հասկացնելու համար ամբողջ լեռ-
գույթի պատճառը և վերացնի, վորպեսզի արտա-
դրության ամբողջ ընթացքը չփոխվի:

Ժամանակակից վորակյալ բանվորի աշխատան-
քը կրում է իր մեջ արտադրության լերկու-
թունկցիա: այստեղ բանվորը վոչ միայն սոսկ
կատարող, մեքենաները արտադրող, այս կազ-
մակերպող է: Կապիտալիստական հասարակակար-
գում, աշխատանքի բաժանման հետևանքով, այդ
լերկու ֆունկցիաները չեն միացվում, այնտեղ
մտավոր աշխատանքը բաժանվում է ֆիզիկակառ-
նից: Խորհրդավին Միության մեջ, արտադրու-
թյան փոխնարարերությունների փոփոխություն-
ների հետևանքով, այդ լերկու ֆունկցիաների
միացումը ամենայն համառությամբ առաջ է
տարվում: Այստեղ բանվորը վոչ միայն կատարող,
և, այս արտադրության պրոցեսը ղեկավարող:
Ժամանակակից տեխնիկան, խորհրդավին պայ-
մաններում, վոչնչացնում է վորակյալ և անվո-
րակ բանվորների աշխատանքի սահմանները և
հետագալում այն անջրապետը, վոր գոյություն-
ունի կապիտալիստական հասարակակարգում մտա-
վոր ու ֆիզիկական աշխատանքի մեջ, կվերանա:
Արտադրությունը կազմակերպող բանվորը

պետք ե ունենա կազմակերպչական ունակություններ, նրա աշխատանքը պետք ե կրի ստեղծագործական բնուլիթ։ Արտադրության արտադրողականությունը բարձրացնելու համար նա պետք ե կարողանա ավելի կատարելագործված մեքենաներ ստեղծել, ոգտագործելով գիտության վերջին նվաճումները, խորացնելու ու կատարելագործելու արդյունաբերության մեքենայացումը և աշխատանքները գիտականորեն կազմակերպելու։

Խորհրդակին Միության մեջ բանվորը պետք ե ունենա նաև այլ հատկություններ։ Լինելով արդյունաբերության կազմակերպողը, պետք ե լինի նաև նոր հասարակական փոխհարաբերություններ ստեղծողը։ Նա իր՝ հեղափոխականությամբ քանդելով, ջարդելով ու քայլալով մարդկակին հին փոխհարաբերությունները, պիտի ստեղծի նորը՝ սոցիալիստական հիմունքներով։ Նա իր մեջ պետք ե կրի յերկու կարևոր հատկություն—պայքարող և կառուցող։

Բնավորության ալս կամ այն գծի ուժեղ կամ թույլ յերևան գալը կախված ե այն սոցիալ-քաղաքական շրջանից, վորում նա ապրում է։ Կապիտալիստական հասարակակարգում նա իրեն յերևան ե բերում վորպես հեղափոխական մարտիկ—պայքարող։

Խորհրդավին Միության մեջ նա լերեան և գալիս վորպես պալքարող և կառուցող։ Սացիալիստական հասարակակարգում, յերբ դասակարգերը կվոչնչանան, նա լերեան կգա միայն վորպես կառուցող։ Կնշանակի՝ նոր բանվորը պետք է լինի կազմակերպող և արդյունաբերող։

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոցիալիստական վերակառուցման շրջանում, յերբ կազմերի խնդիրը չափազանց լուրջ և հարվածացին և դրված մեր առաջ, հնդանիա սլանի իրադործումը մեզնից պահանջում է արագ և առանց դանդաղելու պատրաստել կոմունիստական վոգով դաստիարակված մասնագետներ մեր արտադրության համար։ Արդպիսի դաստիարակություն կարող է տալ միայն աշխատանքի դպրոցը։

Մարքուր աշխատանքի դպրոցի սկզբունքները ձեակերպել ե դեռ առաջին Խստերնացիոնալի կոնգրեսում։ Նրա յեզրակացությունն այն եր, վոր գործարանալին աշակերտության ուսուցման ձեզ ամենակատարելագործված ժողովրդական կրթության ձեն ե։ Գործարանալին կրթությունը կապված է արտադրության և գործարանի հետ։

Գործարանը չափազանց մեծ դաստիարակչա-

կան նշանակութիւն ունի: Այստեղ աշակերտները նախ ծանոթանում են ապրանքների արտադրության հետ, արտադրության նյութական արժեքների հետ, յերկրորդ՝ պատկերացում են ստանում, թե մարդը ինչպես և կարողանում ազդել բնության վրա և հում նյութից պատրաստում իրեր, յերրորդ՝ տեսնում են մարդկության աշխատանքի գիտական արդյունքները՝ ինչպես ելեկտրականություն, քիմիա և այլն, կապում դպրոցում տեսականորեն անցած նյութերը գործնականի հետ, կյանքի յերևություները, բնագիտություն, մեխանիկա և այլ առարկաները ուսումնասիրում իրական կյանքում և չորրորդ՝ մամակցելով արտադրությանը՝ աշակերտները գործնականորեն տեսնում են մարդկանց փոխհարաբերությունները արտադրության մեջ: Գործարանը հանդիսանում է բանվորների հասարակական կյանքի կենտրոնը, և յեթե դպրոցը կառուցված լինի գործարանին կից, աշակերտները հնարավորություն կունենան հենց տեղն ու տեղը ուսումնասիրել ժամանակակից հասարակակարգը իր զարգացման պրոցեսում: Գտնվելով բանվորական շրջանում՝ նրանք լուրացնում են նրանց փորձն ու կոլեկտիվիստական հոգերանությունը, մանավանդ, վոր գործարանը իր աշխատանքի բնությունը ազդում է նրանց վրա, որտե-

բաստում և կարգապահ մարդիկը Գործարանը
կարգապահություն տարածող միջավայր և հան-
դիսանում, աշակերտների մեջ կարգ ու կանոնին
հետեւելու, ճշտությամբ պարտականությունները
կատարելու զգացում մշակում:

ՊՈՂԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատանքի դպրոցի առանձնահատկություն-
ներից մեկը նրա պոլիտեխնիզմն եւ:

Մարքսն ու Ենգելսը հանդիսանում են պոլի-
տեխնիկական կրթության հիմնադիրները, վորոնք
գտնում են, վոր պոլիտեխնիկական կրթության
ելեմենտները առաջ են գալիս կապիտալիստական
հասարակակարգում, լայն կիրագործվեն պրոլե-
տարիատի դիկտատուրայի որով, իսկ կոմունիս-
տական հասարակակարգում ամբողջապես հստ-
րավորություն իունենան կենսագործվելու կյան-
քում:

Պոլիտեխնիկական կրթությունը պրոլետարիա-
տի դասակարգային զենքն եւ և տնտեսական ու
կուլտուրական զարգացման միջոցը:

Մարքսի ու Ենգելսի նախորդները խոսել են
միայն աշխատանքի դպրոցի և պոլիտեխնիկական
կրթության վորոշ ելեմենտների մասին, բայց պո-
լիտեխնիկական կրթությունը այսպիսի դրվագքով,

ինչպես ալժմու մենք հասկանում ենք, դոլություն
չի ունեցել: 18-րդ դարում աշխատանքի դպրո-
ցի դաստիարակության սկզբունքի մասին խոսել
են Ծուսսոն ու Պեստալոցցին: Նրանք հայտարա-
րել են լեռեխաների բազմակողմանիորեն զար-
գացնելու սկզբունքները արհեստակցական և մա-
նուֆակտուրային արդյունաբերության հիման վր-
քա: 19-րդ դարի սկզբներին Ծորերու Ոււենը աշ-
խատում եր նույնիսկ գործնականորեն կազել
ուսուցումն արտադրական աշխատանքների հետ
և ունեցել ե վորոշ հաջողություններ: Նրա փորձ
ել նույնիսկ վորոշ հիմք ե ծառայել Մարքսի
Ենդելսի պոլիտեխնիկական կրթության սկզբունք-
ներին:

Նրանք ուսումնասիրելով կապիտալիստական
արտադրությունը, վորի զարգացումը պոլիտեխ-
նիկական կրթության համար նախադրյաներ ե
ստեղծում, հաստատեցին, վոր մանր արդյու-
նաբերությունը, կապիտալիզմի որով, անխուսա-
փելիորեն պետք ե կործանվի. նա չի կարող դի-
մանալ խոշոր արդյունաբերության մրցմանը, վո-
րը զարգանում ե կուտակման և կենտրոնացման
ուղիներով և վորի հետեւանքով հասարակական
դարպացման բարձր աստիճանում տնտեսական
հիմք ե դառնում վոչ թե մանր արդյունաբերու-
թյունը, այլ խոշորը, վորից և լեզրակացություն

ե արվում, թե ապագայի դպրոցը առաջ կգա
խոշոր արդլունաբերութլան պայմաններում:

Պոլիտեխնիկական կրթութլան նպատակն է
դաստիարակել ու պատրաստել բազմակողմանիո-
րեն զարգացած մարդիկ, այսինքն բազմակողմա-
նի զարգացում ունեցող տրատղրողներ։ Այդ բըդ-
խում ե արտադրութլան պահանջներից, վորով-
հետեւ բազմակողմանի զարգացած մարդիկ բարձ-
րացնում են աշխատանքի արտադրողականու-
թյունը, հետևապես պոլիտեխնիկական կրթու-
թյունը իրագործում ե յերկու նպատակ. նախ՝
նա բարձրացնում ե հասարակական արտադրո-
գականութլունը և յերկրորդ՝ նա հանդիսանում
ե վորպես մեթոդ դաստիարակելու բազմակող-
մանի զարգացած մարդիկ։ Մաքսը բազմակողմա-
նի զարգացտծ մարդիկ հասկանում եր այնպիսի
մարդիկ, վորոնք արդյունաբերութլան արտա-
դրութլան դիտական հիմունքներին ծանոթանում
են վոչ միայն տեսականորեն, այլ և գործնակա-
նորեն, անմիջապես մասնակցելով արտադրու-
թլան պրոցեսին։ Նա գրում է. «Կրթութլուն ա-
սելով մենք յերեք բան ենք հասկանում. 1. մը-
տավոր կրթութլուն, 2. անսպիսի ֆիզիկական
զարգացում, վոր տալիս են մարմնամարգական
դպրոցն ու զինվորական վարժութլունները, 3.
պոլիտեխնիկ դաստիարակութլուն, վոր ծանոթաց-

նում ե արտադրական բոլոր պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին, և միևնույն ժամանակ լեռեխալին ու դեռահասին արտադրության բոլոր տարրական գործիքների հետ վարվելու գործնական ունակություններ և տալիս»։ Այդ վերոհիշյալ լեռեք գծերով են բնորոշվում բազմակողմանի զարգացած արտադրողները—մտավոր ու ֆիզիկական զարգացում և պոլիտեխնիկական կրթություն։

Այդ նույնը հաստատում ե նաև ինքը ընկ. Լենինը, վորն ասում է. «Անկարելի յէ պատկերացնել ասլագա հասարակության իդեալը, առանց միացնելու ուսուցումը լերիտասարդ սերնդի արտադրական աշխատանքներին», —վոչ ուսուցումն ու կրթությունն առանց արտադրական աշխատանքների, վոչ արտադրական աշխատանքներն առանց զուգընթաց ուսուցման ու կրթության, չեն կարող դրվել այն բարձրության վրա, վոր պահանջում ե տեխնիկալի ժամանակակից մակարդակն ու գիտության զրությունը։

Մարքսն ասում է. «Գործարանալին սիստեմից առաջ լեկավ ասլագա դաստիարակության սաղմերը, վորը վորոշ հասակի բոլոր լեռեխանների համար արտադրական աշխատանքը կմիացնի ուսուցման ու մարմամարզության հատ, ըստ վորում դա վոչ միայն հասարակական արտադրու-

թան բարձրացման մեթոդ կլինի, այս բազմա-
կողմանիորեն զարգացած մարդիկ կստեղծի»:

Այս ցիտատի մեջ Մարքսը բնորոշում է պոլի-
տեխնիկական կրթության ամբողջ երաթլունը:
Նա այստեղ ցուց է տալիս, վոր պոլիտեխնիկա-
կան կրթութլունը, ինչպես մի փոքր առաջ ա-
սացինք, ծնվում է գործարանային սիստեմից և
ապագայի դաստիարակության սատրին և հանդի-
սանում, վոր այդպիսի դաստիարակության երա-
թլունն այն է, վոր միացնում է յերեխաների
արտադրական աշխատանքները ուսուցման և
մարմնամարդության հետ, վոր հենց արտադրու-
թյան պրոցեսի ժամանակ ել կդաստիարակվեն
յերեխաները վորոշ հասակում, և վոր այդպիսի
դաստիարակութլունը ծառայում է վորպես հա-
սարակական արտադրության բարձրացման մե-
թոդ և բազմակողմանիորեն զարգացած մարդ-
կանց դաստիարակելու ձև։ Հետևապես պոլիտեխ-
նիկական կրթության ամենահիմնական, բնորո-
շող կետը յերեխաների արտադրական աշխա-
տանքները ուսուցման և մարմնամարդության հետ
ձուլելն է։

Պոլիտեխնիկական կրթության սկզբունքների
մասին գրված է նաև կոմկուսակցության ծրա-
դրում, ուր առված է. «անցնել ձրի, պարտագիր,
ընդհանուր և պոլիտեխնիկական կրթության (վո-

ըը տեսականորեն ու գործնականորեն ծանոթացնում ե արտադրութիւնն բոլոր գլխավոր ճյուղերի հետ) մինչև 17 տարեկան լերկու սեռի բոլոր լերեխաների համար»:

Ա աստիճանի դպրոցների պրոֆեսիոնալիզացիակի ժամանակ ընկ. Լենինը գրում է. «Ա աստիճանի դպրոցների (ավելի ճիշտ Ա աստիճանի բարձր խմբերի, 12-17 տ.) խնդիրն ե . տալ իր գործը կատարելապես իմացող, միանգաման ընդունակ վարուկետ գառնալու և փոխարինելու դրահամար գործնականորեն պատրաստված»:

- ատաղձագործին,
- հյուսնին,
- փականագործին և այլն:

Այն տարբերութիւնը, սակայն, վոր արդ «արհեստավորը» ընդհանուր լայն կրթություն ունենա (գիտենա... այս ինչ, այս ինչ գիտությունների հիմունքները. — ձշորեն ցույց տալ — վոր), կոմունիստ լինի (վորոշակի ցույց տալ, թե ինչ պետք ե զիստենա), պոլիտեխնիկական աշխարհահայացք ունենա և պոլիտեխնիկական կրթության հիմունքներին տիրապետի»....:

Վերև բերված ցիտասներից պետք է գալ հետեւյալ լեզրակացությանը. — պոլիտեխնիկական կրթության հիմնական գծերն են.

1. Յերեխաների անմիջական մասնակցությունը արտադրական աշխատանքներում.

2. Տեսականորեն և գործնականորեն ծանոթանալ արտադրական բոլոր պրոցեսների ընդհանուր գիտական սկզբունքներին:

3. Արտադրական աշխատանքը միացնել համապատասխան ֆիզիկական դաստիարակության և մտավոր զարգացման հետ:

Անցողիկ շրջանի դպրոցի համար պետք է առանձնապես ընդգծել յերեխաների հասարակական արտադրական աշխատանքի դաստիարակության, սոցիալական դաստիարակչական բնույթը։ Հասարակական-արտադրական աշխատանքների աեսակներից մեկը հասարակական-ոգտակար աշխատանքն է, ուսափի հասարակական-ոգտակար աշխատանքը անցողիկ շրջանի պոլիտեխնիկ դրագույի նշաններից մեկն է։

Կրուպակալան պոլիտեխնիկական կրթության ընտրուսող գծերին ավելացնում են մի նոր գիծ։ «Մենք մեր «պոլիտեխնիկացիավի» հասկացողությանը պետք է մի հավելյալ գիծ ել ավելացնենք. մենք պետք են յերեխաներին վոչ միայն աշխատանքի դիմավոր, հիմնական տեսակներին սովորեցնենք, այս անհնաժեշտ է, վոր նրանք (յերեխաները) իրենց ձեռք բերած տեխնիկական ու գործատնտեսական գիտությունները սովորեն գործադրել չափազանց բարդ ու բազմազան պալմաններում»։


ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՎ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԴՊՐՈՑԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Վորապեսզի աշխատանքի դպրոցը շշփոթենք
պոլիտեխնիկական կրթության հետ, պարզաբանենք նրանց փոխհարարերությունը, տեսնենք կամ նրանց մեջ նմանություն, կարելի՞ լե արդյոք նրանց շփոթել միմյանց հետ, նմանեցնել պոլիտեխնիկական դպրոցը աշխատանքի դպրոցին բոլորովին չի կարելի. աշխատանքի դպրոցի հասկացողությունը բավական լայն է և առաձգական, նա կարող է ունենալ բազմազան բովանդակություն։ Աշխատանքի դպրոցի սկզբունքները պաշտպանում են զանազան դասակարգեր, իսկ պոլիտեխնիկական դաստիարակությունն առաջազրում է միայն պրոլետարիատը։ Դա չի նշանակում, թե աշխատանքի դպրոցի դաստիարակությունը զուրկ է դասակարգային բովանդակությունից։ Աշխատանքի դպրոցի երությունը պայմանավորվում է տվյալ հասարակակարգի տիրող դասակարգի նպատակադրումներով։ Բուրժուական պետությունների աշխատանքի դպրոցը հանդիսանում է իրեն միջոց տարածելու իր ազգեցությունը, աշխատավոր լայն մասսալի վրա և պատրաստելու նրանցից իրեն համար լավ մասնագետ բանվորներ, բայց վոչ արտադրություն

կազմակերպողներ։ Խորհրդավին դպրոցն ընդհակառակը աշխատանքավին դաստիարակությունն անց և կացնում պրոլետարիատի վոգու պահանջների համեմատ։

Պոլիտեխնիկական դպրոցը չի կարող հակադրվել աշխատանքի դպրոցին։ Նա վերջինի գանձան ձևերից մեկն է։ Բայց ամեն տեսակի դպրոց պոլիտեխնիկական չի, վորովհետև նա (աշխատանքի դպրոցը) զանազան նյութական բազա ունի, վորը համապատասխանում է արտադրության վոչ միայն ժամանակակից, այս աշխատանքի լեռամնաց ձևերին, նայած թե պատմական զարգացման վոր ետապներն ե արտացոլում։ Նյութական բազայի բազմազան բընութով ել վորոշվում է աշխատանքավին դաստիարակության զանազան ձևերը։ Պոլիտեխնիկական դպրոցը ապագայի դպրոցն է։ Նա ծնունդ է առնում արդյունաբերության արտադրության պարմաններում, սակայն աշխատանքի դպրոցը կարող է պրոֆեսիոնալ դպրոց լինել։ Պոլիտեխնիկական դպրոցը ժխտում է սովորողներին մասնագիտական պատրաստություն տալի։

Պոլիտեխնիկական դպրոցը հանրակրթական է։ Արա նպատակը չի մամնագիտացնելը, այլ ընդհակառակը նա հասկացողություն ե տալիս բնության, աշխատանքի, սոցիալական կյանքի



մասին, խորապես տարբերելով մլուս հանրակըրթական դպրոցներից։ Պոլիտեխնիկական դպրոցը գիտությունը տալիս է վոչ թե կլանքից կտրված, այլ կոնկրետ իրականության կապակցությամբ, լեռեխաների արտադրության պրոցեսների ակտիվ մասնակցությամբ։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Պոլիտեխնիկական դպրոցը չի ժխտում նույնպես և սոցիալական դաստիարակությունը։

Սոցիալական դաստիարակությունը զարգացնում է լեռեխաների հասարակական բնագդները, հասարակական ունակությունները և դասակարգավին ինքնազիտակցությունը։ Այդ իրագործվում է մանկական ինքնավարության կազմակերպման միջոցով, հասարակական կյանքին ակտիվ մասնակցությամբ, տարով մանկական աշխատանքներին արտադրական ու հասարակական բնույթ, այն ձևով, վոր կողեկտիվիստական ունակություններ տա։

Եթերեխաների արտադրության մասնակցելը վոչ միայն արտադրության տեխնիկավիճ է սովորեցնում նրանց, այլև աշխատանքի պայմաններից բղասող հասարակական կյանքին։ Նրանք ուշադրություն են դարձնում մարդկանց հարա-

բերության վրա արտադրական պրոցեսի միջոցին,
բանվորների ու գյուղացիների տնտեսական դը-
րությունն ուսումնասիրելիս ու նրանց քաղաքա-
կան պահարի ընուլթին և ձեւերին ծանոթանա-
լու ժամանակ։ Պոլիտեխնիկական գպրոցը սո-
ցիալական դաստիարակությունը կառուցում և
գործարանալին մթնոլորտի շրջապատում։ Ցերբ
խոսում ենք պոլիտեխնիկ դաստիարակության
մասին, ապա հենց զրա հետ հասկացվում և և
սոցիալական դաստիարակությունը — մեկը մլուսին
հակադրվել չեն կարող։ Պոլիտեխնիկական դաս-
տիարակությունը, առանց աճող սերնդի բազ-
մակողմանի զարգացման, անմիտ բան է։ Պոլի-
տեխնիկ գպրոցը լերիտասարդ սերնդին բազմա-
կողմանիորեն պատրաստելով արտադրության
համար, միևնույն ժամանակ պատրաստում և այդ
սերունդը նաև բազմակողմանի հասարակական
գործունելության համար։ Ամեն մի արտադրող
պետք և վոչ միայն նյութական արժեքներ ստեղ-
ծի, այս կարողանաւ կառուցել արտադրությու-
նը, զեկավարել տնտեսությունը, մասնակցելով
հասարակական կազմակերպություններին։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱ- ՆՈՐԵՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Պոլիտեխնիկական կրթության բազան հանդի-
սանում և արդյունաբերությունը և վոչ թե ար-
հեստն ու ձեռքի աշխատանքը։

Մանուֆակտուրալի շրջանում, յերբ դեռ
զարգացած չեր արդիունաբերությունը, պոլի-
տեխնիկական կրթություն ասելով հասկանում
ելին ձեռքի աշխատանքը: Գոյություն ուներ վո-
րոշ հոսանք, վոր պոլիտեխնիկական կրթության
բազան ընդունում եր ձեռքի աշխատանքը, իսկ
Մարքսը, ինչպես ասացինք վերևում, գրում է,
վոր պոլիտեխնիկական դպրոցը ձնունդ և զոր-
ծարանալին սիստեմի:

Վերոհիշյաներից լենելով, կարող ենք պոլի-
տեխնիկական կրթությունը ընորոշել հետևյալ
ձևով.—պոլիտեխնիկական կրթություն ասելով
հասկանում ենք անապիսի դպրոց, ուր

1. Դպրոցը կցված է արտադրությանը և դպրո-
ցում գոյություն ունի արտադրական աշխատանք:

2. Դպրոցի ծրագրամեթոդական աշխատանք-
ներում տվյալ արտադրությունը կտպմում է զլյ-
խավոր առանցքը:

3. Դպրոցն ունի ուսումնական արհեստանոցներ
և այդ արհեստանոցները մտնում են տվյալ տըն-
տեսական հիմնարկի արտադրական պրոցեսի մեջ
և կազմում նրա արտադրական ցեխը:

4. Դպրոցն իր ամբողջ աշխատանքներով մըս-
նում է այդ արտադրության աշխատանքի ծրագրի
մեջ և վոչ միայն աշխակերտությունը, այլև մանկա-
վարժական ուժերը կապված են այդ մնանեառ-
թյան հետ:

5. Դպրոցը տանում ե մի շաբթ հասարակական
անհրաժեշտ աշխատանքներ։

Պոլիտեխնիկական դպրոցի ելեմենտները սկիզբն
են առել կապիտալիստական ինդուստրիալի ժա-
մանակ, բայց այդ դպրոցը չի կարող լրիվ կերպով
գործել այդ հասարակակարգում, և Մարքսը գրա-
նում ե, վոր յեթե գործարանատիրոջ փոքրիկ
զիջումը կարող է հնարավորություն ստեղծել
տարրական կրթությունը միացնել գործարանի
հետ, կնշանակի բանվորների իշխանությունը լիո-
կատար հնարավորություն կտա ավելի լայն չա-
փով իրագործել այդ և դպրոցում արժանի տեղ
տալ գործարանային աշխատանքներին։

Բնկ. Լենինը պոլիտեխնիկական կրթությունը
ժամանակակից հասարակակարգի փոփոխության
ամենագլխավոր միջոցներից մեկը համարելով,
դեռ 20 թվին գրում ե. «Անպայման ինդիր զնել
անհապաղ պոլիտեխնիկական կրթության անցնե-
լու, կամ ավելի ճիշտ—անհապաղ իրականացնե-
լու մի շաբթ հենց ալժմ արդեն մատչելի քայլեր
—պոլիտեխնիկական կրթության ասպարիդում»։
Սակայն քաղաքացիական պատերազմը, յերկրի
տնտեսական քայլարումը, կուլտուրական հետա-
մնացությունը հնարավորություն չեն տվել այդ
իրագործելու։ Բայց ալժմ, ինչպես գրում ե ընկ.
Կրուպսկայան ։ Ի համամիութենական պոլիտեխ-

նիկական կրթության համագումարի թեղիններում, «ժողովրդական տնտեսության արագ թափը բանվորական ուժերի վերախմբումն և կատարում — փոփոխում և նրանց զբաղմունքի բընութը, դարձնելով ել ավելի մասսայական, ել ավելի խոր» Մեր ժողովրդական անտեսության վերակառուցումը հրամայողաբար պահանջում է հարմարվել արմատապես փոխվող ֆունկցիաներին, վորը կարող ե տալ միայն կանոնավոր — ուղիղ դրված պոլիտեխնիկական կրթությունը, Պոլիտեխնիզմը կարող ե բավական խոշոր չափով հարթել այն դժվարությունները, վոր կապված են վերակառուցման արագ թափից»:

Առաջին ինտերնացիոնալի առաջին կոնվրեսի բանաձեռում Մարքսը գրում է. «Թիգիկական հիմունքներից լենելով, մենք անհրաժեշտ ենք համարում, վոր լերկու սեռի լերեխաներն ու դեռահամները բաժանվեն լերեք կատեգորիալի, վորոնք և պետք ե տարբեր պարմանների մեջ դըրվեն» Առաջին կատեգորիան ընդգրկում է 9—12 տարեկան լերեխաներին, լերկրորդը՝ 12—15, իսկ լերրորդը՝ 16—17 տարեկան դեռահամներին: Մենք առաջարկում ենք, վոր առաջին կատեգորիալի զբաղմունքի տևողությունը վորևե արհեստանոցում կամ ընտանեկան տնտեսության մեջ որենքով սահմանափակվեր լերկու ժամով, հասակի

լերկրորդ կատեգորիալինը՝ չորս և լեռորդը՝ որական վեց ժամով...

9 17 տարեկան լերեխաների և դեռահաների լերեր հասակալին կատեգորիաների բաժանելը պետք է համապատասխանի մտավոր, մարմնամարդական և պոլիտեխնիկական դաստիարակության աստիճանական և պրոգրեսիվ ուսումնական ծրագրին։ Գուցե միայն առաջին հասակալին խմբի բայցառությամբ, պոլիտեխնիկական գպրոցի պահպանման ծախքերը մասամբ պետք է ծածկիվեն նրանց պատրաստած իրերի վաճառումով։ Աշխատավարձ ստացող արտադրական աշխատանքի միացումը—մտավոր գարգացմանը՝ ֆիզիկական վարժությունների և պոլիտեխնիկական պատրաստության հետ, բանվոր դասակարգին բարձրացնում և շատ ավելի բարձր մակարդակի, բան այն մակարդակը, վորի վրա գտնվում են այժմ հասարակության միջին և բարձր դասակարգերը»։

Ինչպես ցուց է տալիս այս բանաձեր, աշակերտների աշխատանքը պոլիտեխնիկական դըպրոցում այնքան արդյունավետ պետք է լինի, վոր հնարավորություն ստեղծի գպրոցի ծախաերի միմասը ծածկել - պատրաստած իրերի միջոցով։

Պոլիտեխնիկական գպրոցը հաշվի լի առնում հոգեֆիզիոգիական առանձնահատկությունները,

աշտկերտների հասակը, նրանց խմբերի բաժանումը և ալին:

Ծրագրերը, աշխատանքի ձեռը պատրաստի չեն հրամցվում վերևից, այլ մշակվում են ու հարմարեցվում ըստ տեղական առանձնահատկությունների, ինարկե, արնապես, վոր չխախտվի կրթության ընդհանուր խնդիրներն ու նպատակները:

Պոլիտեխնիկական կրթությունը պետք է սկզբան փոքր հասակից՝ առաջին աստիճանի դպրոցից, նույնիսկ մանկապարտեզից:

ՊՈԼԻՏԵԽՆԻՉԶՄՆ ԳՈՐԾԱԲ. ՑՈԹԱՄՑԱԿՈՒՄ

Պոլիտեխնիկական կրթությունը դեռ տարրական դպրոցներից սկսելը ձեռնտու լե նախ մանկավարժական տեսակետից։ Մանկական հասակը ավելի եֆեկտավոր է մանկավարժության տեսակետից, մանկության հասակում լուրացրած ունակություններն ու գիտությունն ավելի ամուր են մնում հիշողության մեջ։ Ցերկրորդ ոգուտը տնտեսական է, լեթե աշակերտներն առաջին աստիճանի դպրոցում և գործարանավին Նամակում վորոշ չափով ծանոթ լինեն արդյունաբերությանը, ունենան ընդհանուր կրթություն, կրթության բարձր ողակներն ավելի եժան կնքու-

տեն: Որինակ, յեթե նրանք Շ-ամլակում պողի-
տեխնիկական կրթություն ստանան, տեխնիկումի
ծրագիրը հեշտությամբ կանցնեն և նրանց կրր-
թությունը ալգաեղ ավելի եժան կնստի, հե-
տեապես կադրերի պատրաստման խնդիրը ճիշտ-
լուծելու համար անհրաժեշտ է — գործարանային
Շ-ամլակի պողիտեխնիկական կրթությունը կա-
նոնավոր հիմքերի վրա դնել: Գործարանային Շ-
ամլակում գործն ախպես տանել, վոր վերջաց-
նողը հասկանա - արտադրության պրոցեսի կա-
րևոր ճյուղերը, ինչպես, — մեքենական, քիմիական
պրոցեսները, եներգետիկ հիմունքները, աշխա-
տանքի կազմակերպումը, ցեխերի բաժանմունք-
ների փոխադարձ կապը, հիմնարկի ճյուղերը:

Առանց արդյունաբերության միջնորդ — միաց-
նող ճյուղերի հետ ծանոթ լինելու, աշակերտը
չի կարող ճիշտ հասկացողություն ունենալ տրն-
տեսության, ամբողջ — ընդհանուր արտադրու-
թյան մասին, նա չի կարող ըմբռնել վերակա-
ռուցման խնդիրները, տվյալ արտադրության-
տեղը ժողովրդական տնտեսության կառուցման
մեջ, — ուստի գործարանային Շ-ամլակի աշակեր-
տը պետք է ուսումնասիրի վոչ միայն իր գոր-
ծարանի ու արտադրության տեխնոլոգիան, այ-
նա ծանոթ պիտի լինի նաև մի շարք այլ ճյու-
ղերի տեխնոլոգիական պրոցեսներին, մետաղի,

քիմիալի, ելեկտրոտեխնիկալի, գլուղական տնտեսության շինարարության:

Գործլոթամյակը որգանապես կապված լինելով արտադրության հետ, բանվորական ուժ չի պատրաստում, այլ հետագա պրոֆեսիոնալ, պոլիտեխնիկական կրթության հիմք ե տալիս, ուր արդեն արդլունաբերության վորոշ ճյուղի համար կադրեր են պատրաստում:

Դամյակում դեռ մասնագիտացում չկա: Նրանպատակն ե ըմբռնել տալ աշակերտառությանը արտադրության իսկական հիմունքները, ոգնել նրան հասկանալու արտադրության տվյալ ճյուղի տեխնիկական և տնտեսական փոխհարաբերությունները մի շարք այլ ճյուղերի հետ, զինել նրան տեսականն ու գործնականը կապակցելու կարողությամբ:

Գլուղական դպրոցի առանձնահատկությունն այն է, վոր յերեխաները ավելի շատ են հնարավորություն ունենում մասնակցելու արտադրական աշխատանքներին, բայց ավելի անհարմար պայմաններում — զուրկ են արտադրության զանազան ճյուղերից և համարյա թե բոլորովին ինդուստրիալից: Պետք է աշխատել այդ դպրոցներին կից ստեղծել մեքենալազման յենթարկված գլուղատնտեսական արտադրական բազաներ: Գլուղական դպրոցի աշակերտառությունը, բացի գլուղա-

անտեսական աշխատանքից, պետք է աշխատի
ծանոթանալ նաև ինդուստրիալ արտադրության
հիմնական սկզբունքների հետ: Նրանք պետք է
լայն ձեռվ կազմակերպեն մեքենայացման լեն-
թարկված բազմազան արհեստանոցներ:

Պոլիտեխնիկական դպրոցի աշխատանքներն
անհրաժեշտ են բաժանել հետեւյալ ձեռվ.

Առաջինը — կցել դպրոցը վորոշ արտադրու-
թյան: Հայն պոլիտեխնիկական կրթություն կազ-
մակերպելը գործոթամյակում ապահովված կա-
րող է լինել միայն այն պարմաններում, յերբ
գործոթամյակը որպանապես կապված կլինի ար-
տադրության հետ: Ուսման փոքր տարիներից
սկսած, լերեխաններին հնարավորություններ տալ
ուսումնասիրելու արտադրությունը և տիրապե-
տելու պոլիտեխնիկական աշխատանքներին: Ամեն
մի գործոթամյակում բարձր խմբերի համար
պետք է հիմնվեն հարմար ուսումնա-արտադրա-
կան բաժիններ-ցեխեր, գործարանին կամ դրա-
բոցին կից, վորոնք պետք է աշխատեն իբրև
գործարանի բաժիններ—նրա իրավունքներով:

Յերկրորդը — տվյալ արտադրության ուսում-
նասիրությունը դառնում է գործոթամյակի մը-
շակած բոլոր ծրագրերի հիմնական առանցքը:

Յերրորդը — գործոթամյակի փոքր խմբերի հա-
մար պետք է կազմակերպվեն բանվորական սեն-

յակներ, վորոնք հնարավորութիւնն կտան յերե-
խաներին մոտենալ արտադրութիւնն տեխնիկալին,
զարգացնել նրանց ընդունակությունները՝ գլու-
տարարութիւնն զբաղվելու:

Զորլորդը—բարձր խմբերի ուսանողների համար
արտադրական պրակտիկա կազմակերպել արտա-
դրութիւնն արհեստանոցներում և ցեխերում:

Հինգերորդը—դպրոցը ուսումնասիրելով իրեն
մատչելի արտադրությունը, մի կողմից կապ է
հաստատում այդ պրոցեսների հիմնական սկզբ-
քունքների և տնտեսութիւնն ազ ճյուղերի ար-
տադրական պրոցեսների միջև, մյուս կողմից
ծանոթացնում է միմյանցից տարբերվող պրո-
ցեսներին ու այդպիսով ամբողջ արտադրութիւնն
ընդհանուր սիստեմի քիչ թե շատ ամբողջացած
պատկեր և տալիս:

Արտադրական աշխատանքը ընդհանուր կըր-
թութիւնն նկատմամբ վոչ թե իլլուստրացիա
պետք է լինի, ազ ծառալի նրան վորպես հիմք:

Գործարանի շուրջը հասարակական աշխատանք
կազմակերպել ու նենց դպրոցը մոքիլիզացիալի
լենթարկել, ոգնելու արտադրութիւնը՝ արտադր-
րական ծրագիրն իրագործելուն: Դպրոցը պետք
է հիմնավորի իր հասարակական-ոգտակար աշ-
խատանքի կոնկրետ ծրագիրը ավելի տեսական
ժամանակաշրջանի համար, և ուժեղացնի կոմու-

նիստական դաստիտրտկչական աշխատանքները:

Ծրագիրը կազմելիս և լոթամլակի վերակառուցումն անցկացնելիս, անհրաժեշտ է հաշվի առնել այն արտադրության առանձնահատկությունները, փորը տվյալ դպրոցի հիմքը պետք է կազմի:

Տնտեսական հիմնարկները դպրոցականների աշխատանքներին պետք է արտադրական նշանակություն տան, նրանք պետք է պարագաներ ստեղծեն, վորպեսզի լերեխանները միևնույն դազգահանի մոտ չնստեն, կամ աննպատակ կերպով շշրջեն զործարանի բաժանմունքներում, այլ ապահովեն նրանց ուժերին համապատասխան աշխատանքներով:

Վորպեսզի այս լայն հանրակրթական վերնաշենքը կապված լինի արտադրական աշխատանքների հետ, պետք է լայն կերպով իրագործել աշակերտներին մի արտադրությունից մյուսը ժամանակավոր զործուղելը, ինկատի ունենալով, վոր պետք է տեղի ունենանական արդյունաբերական հիմնարկից զյուղատնտեսականը:

Այդ փոխադրությունների ժամանակ չի կարելի սահմանափակվել սովորական եքսկուրսիաներով, վորոնք հնարավորություն են տալիս միայն ուսմունքը անցողակի կերպով կապել արտադրության հետ և վոչ թե արտադրական աշխատանքներում խորանալ:

Գլուղատնտեսության ինդուստրացումը և նրա վերակառուցումը սոցիալիստական հիմունքներով, վոր անց և կացվում բանվոր դասակարգի անմիջական ղեկավարությամբ, պետք և վոչ միայն ամեն գործլոթամյակի ուսումնասիրության առարկա դառնա, այլ և անմիջապես գործոն մասնակցություն ունենա, ու բանվորների յերեխաները ակտիվ կերպով մասնակցեն բանվորական-շեֆ ընկերությունների, բանյորական բրիգադաների միջոցով։

Ամեն մի գործլոթամյակ կապվելով գլուղի, գլուղական դպրոցի և խրճիթ-ընթերցարանի հետ իբրև շեֆ, սոցիալիստական մրցակցության ձեռվով պետք և ոգնի գլուղի սոցիալիստական վերակառուցման գործին։

ԱՐՀԵՍՏԱՆՈՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ ՑԵՎ ՆԲԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Պոլիտեխնիկական կրթության ասպարիգում դեռ մեծ դեր ունեն խաղալու արհեստանոցները. դրա համար ավելորդ չենք համարում մի փոքր մանրամասն կանգ առնելու այդ խնդրի վրա։

Այժմ ընդգծենք արհեստանոցների աշխատանքները գործլոթամյակների մեծ խմբերի համար։ Գործլոթամյակների աշխատանքը դպրոցական

արհեստանոցներում պոլիտեխնիկական դաստիարակության մի մասն և և լենթարկվում ե այն ընդհանուր նպատակին, վոր ուսանողը պետք ե հասկանաւ վերակառուցվող ժողովրդական անտեսության հիմունքները:

Անհրաժեշտ ե ընդգծել, վոր արհեստանոցների աշխատանքը պետք ե կրի արտադրական բնույթ: Այդ կնշանակե, առաջին—վոր դպրոցների արհեստանոցները արտադրում են հասարակականապես սպառակար և նյութական արժեք ունեցող իրեր. լերկորդ—վորպեսզի արհեստանոցներում արտադրած իրերի հասարակական արժեքը հասկացվի և պարզ լինի սովորողների համար, այսինքն՝ վորպեսզի նրանք իրոք տեսնեն այն արտադրանքի անհրաժեշտությունը, վոր արտադրում են իրենք. լերրորդ—վորպեսզի դպրոցական արհեստանոցների արտադրած արտադրանքը այս կամ այն կերպ ոգտակար լինի այն հիմնարկի համար, վորին կից ե դպրոցը: Այս դրույթին համապատասխան ել պետք ե դրվի դպրոցների արհեստանոցների կազմակերպման խնդիրը:

Արհեստանոցն անհրաժեշտ ե նախ՝ աշխատանքային պոլիտեխնիկական պատրաստությունը. ծավալելու, լերկորդը՝ աշխատանքի մեթոդիկան փոխելու համար: Մենք պետք ե աշխատանքը ուսուցանելու ձեռքի արհեստակցական բնույթից

անցնենք (վորդեռ շատ ուժեղ է դպրոցներում) այն կողմը, ուր արտադրական աշխատանքն իր համար բավականաչափ ամուր տեղ է ձեռք բերել, ուր բազմակողմանի պոլիտեխնիկական աշխատանքը դաստիարակության մեթոդիկան է : Ձեռքի աշխատանքը մեր ծրագրում իր վորոշ տեղն է բռնում. սակայն միայն իբրև ընդհանուր աշխատանքային պատրաստության մի մասը և միայն իբրև միջոց ինդուստրիալ տիպի աշխատանքի ձեերին համեմու համար : Ձեռքի աշխատանքի ձեերը պետք է համարվեն իբրև տիխնորոգիական պատրաստության և տեխնիկական աշխատացքի դարգացման միջոցներից մեկը :

Ուսման սկզբնական տարիներում — առաջին աստիճանում, կարելի լի խոսել առարկայական (իբրերի) մեթոդի մասին, վորը գործադրելիս ուսմանողների ուշադրությունը կենտրոնանում է պատրաստվող վորոշ առարկայի վրա . իսկ այս կամ առանձնակի ոպերացիալի կամ գիտնալու լուրացումը ուսանողի գիտակցության մեջ լիտին շարքն է անցնում — ու այդ (գիտենալը) լիբեխան ձեռք է բերում իր համար աննկատելի կերպով առարկան կամ իբր պատրաստելու պրոցեսում :

Աշխատանքի ունակություններ ձեռք բերելը հետզհետե, տարեց-տարի բարդանում է . բարձր

խմբերում արդեն վորոշ իր շինելու և ձեռք բերելու հետ միասին վորոշակի խնդիր և դրվում ունակություններ ստանալ, կատարելագործվեր մանրակրկիտ կերպով, լավ ու կանոնավոր վորոշ ոպերացիաներ կատարել:

Դպրոցական արհեստանոցները կազմակերպել համապատասխան այն հիմնարկի պահանջների, վորին կցված ե դպրոցը: Դպրոցն ու նրա արհեստանոցները դառնում են գործարանի որգանական մասը և համարվում են նրա ուսումնարտագրական բաժանմունքը—ցեխը:

Արհեստանոցների արտադրական պատվերները ստացվում են գործարանից: Դպրոցն ու աշակերտները արհեստանոցի արտադրական ծրագրին նայում են իրեն գործարանի ընդհանուր արդինապահնի մի մասը:

Արհեստանոցների աշխատանքի միայն այդպիսի բնույթը կարող է հետաքրքրել գործարանային կազմակերպություններին, արհեստանոցները բանվորական մասսաների հսկողության տակ դնել, գրավել բանվորների ուշադրությունը և արժանապահների նրանց ողնությանը:

Արհեստանոցների արդֆինալանները տարվա սկզբին պետք է մշակվեն դպրոցի և այն հասարակական ու գործարանական կազմակերպությունների մասնակցությամբ, վորոնց կարիքը պետք

ե սպասարկեն արհեստանոցները, և վորոնք դորժադրում են դպրոցական արհեստանոցների արտադրանքը։ Այս արդֆինպլանը քննվում է նաև բոլոր խմբակներում։

Համապատասխան ձևով պետք է լինի նաև արհեստանոցներում յերեխաների կազմակերպությունը—այսինքն վորոշ արտադրական առաջադրություններ կատարելու սկզբունքով։ Պետք է առաջ քաշել արհեստանոցների կառավարելու համար համապատասխան կազմակերպություններ, վորոնք պետք է հոգան աշխատանքի պաշտպանության, արդֆինպլանները կատարելու մասին, հիմնարկի արտադրական խորհրդակցությունների տիպի համապատասխան արտադրական խորհրդակցություններ կազմակերպեն։ Այդ խորհրդակցություններին ակտիվ կերպով պետք է մասնակցեն և գործարանացին կազմակերպությունների ներկայացուցիչները։

ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԻՐԱԾՄԱՆ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՎՏԱՆԴԱՎՈՐ
ՅԵՐԵՎՈՒՑԹՆԵՐԸ

Հատուկ փափկանկատությամբ պետք է մոտենալ յերեխաների արտադրական աշխատանքներին մասնակցելու ծրագիրը կազմելու գործինակնալես պետք է կազմել այդ ծրագիրը, վոր խու-

սափենք վաղահաս և նեղ մասնագիտացումից:
Պետք է խոստովանել, վոր արտեղ մեծ վտանգ
կա. նախ - արտադրական աշխատանքներն ու ուս-
մունքը կարող են մեքենալորեն միանալ ու
մեկը մրուսից չբղխեցնել, և յերկրորդ - յերեխա-
ները հանրակրթական տռարկաները կարող են
անցնել և պատասխան չստանալ այն հարցերի
վերաբերյալ, վոր առաջ կդան արտադրական
պրոցեսների միջոցին:

Պոլիտեխնիկմին հասնող այս ծանր հարված-
ները կարող են տխուր հետևանքներ ունենալ
(հոգնեցնել, ֆիզիկական և մտավոր աշխատանք-
ներն անջատել իրարից),

Պոլիտեխնիկմի գործնական աշխատանքները
կազմակերպելիս, կարող են առաջ գալ և վորոշ
այլ վտանգավոր յերեսութիւններ, վորոնց մասին ան-
հրաժեշտ ե մի քանի խոսքով կանգ առնել: Առա-
ջին վտանգն այն ե, վոր մենք շատ խոսում, բայց
գործնականում վոչինչ չենք անում. դա կոչվում
ե սխոլաստիկական պոլիտեխնիկմ, վորով ամ-
բողջապես լեցում ելին մեր նախկին դպրոցները:

Մյուս վտանգն այն ե, վոր պոլիտեխնիկմը մեզ-
նում շատ նեղ ու փոքր քանակով ունակություն-
ներ ձեռք բերելու հարց դնել ե, ինչպես անում
ե Գաստիեվը: Նրա սխալն այն ե, վոր նա պոլի-
տեխնիկացիալի խնդիրը կապում ե միայն աշխա-

տանքալին պոլիտեխնիկալի խնդիրներին, առեւնկին շշոշափելով պոլիտեխնիկական կրթության, պոլիտեխնիկական գիտության խնդիրները։ Նա փորձ չի անում խորանալու, ըմբռնելու ուսանողներին արտադրության մեջ մտցնելու պրոցեսը։ Աշխատանքալին կենտրոնական հստիտուտի (ԿԱԴ) տեսուչ Ա. Կ. Գաստիեվը կարծում է, թե պոլիտեխնիկամբ—դա «աշխատանքալին բազմատեսակ ընդհանուր ունակություններ ձեռք բերելն է»։ Յեվ ինչպես ընդգծում է ընկ. Կրուպսկայան—«Դա շատ մեծ գտանք է։ Մեղ մոտ շատ հաճախ նկատվում է դեպի տեխնիկան, դեպի նեղ արհեստավորական տիպը գլորվելու դեպքեր»։ Այդպիսի դեպքերում զործնականը կանոնավոր կերպով չի կապվում տեսականի, իսկ աշխատանքի պրոցեսը մլուս առարկաների գասավանդման հետ։

Սխալ է նաև ընկ. Սանթրոսյանի կարծիքը, վորարտահայտված է նրա «Սոցիալիստական վերակառուցման ներկա ետապը և ժողովագորության հերթական խնդիրները» գրքույկի մեջ՝ պոլիտեխնիկմի մասին, ուր նա գրում է. «Իմ կարծիքով ճիշտ չեն այն ընկերները, փորոնք պոլիտեխնիկմի բազմակողմանի կրթության խնդիրն անպայման կապում են արտադրության բոլոր կամ բազմաթիվ ճյուղերի ուսումնասիրության հետ»։ Այսինչ հենց նույն գրքի 11-րդ յերեսում

գրում ե—Համ կ (թ) կ ծրագրում շեշտված կետը, ուր ասված ե. «անցնել ձրի, պարտադիր, ընդհանուր և պոլիտեխնիկական կրթությունը սխալ չհասկացվի, փակագծում պարզաբանված ե, «վորտեսականորեն և գործնականորեն ծանոթացնում ե արտադրության բոլոր ճյուղերի հետ»:

Այս կետում ընկ. Սանթրոսյանը միանգամայն աղավաղում ե կոմկուսակցության ծրագիրը: Այս խնդիրը նա սխալ ե դնում, բայց հենվելով Մարքսի կարծիքի վրա, ճիշտ յեզրակացություն ե դուրս բերում—ընկնելով հակասությունների մեջ: Անհրաժեշտ ե ընկ. Սանթրոսյանի այս սխալ թեզի վրա կանգ առնել, վորովհետև մեր մասսայական ուսուցչությունը, զեկավարվելով նրա գրքույկով, կարող ե սխալ կազմակերպչական աշխատանքներ տանել և միանգամայն աղավաղել պոլիտեխնիկմը, դարձնելով վերջինը պրոֆեսիոնալիզմ:

Այդ մասին պոլիտեխնիկական կրթության առաջին համագումարում ընկ. Պանկրատովի զեկուցման ժամանակ, յերբ հարց են տալիս «կարելի՞ յե պոլիտեխնիկմը անցկացնել արդյունաբերության մի ճյուղի հիման վրա և ուրիշ ճյուղի վորակավորումն ստանալ», պատասխանում ե. «հարցը պարզ չե: Յեկ զեկուցումներում և թեզիսներում վորոշակի ասված ե, թե ինչ ե պոլի-

տեխնիզմը։ Դպրոցն ու աշակերտներին չի կարելի պոլիտեխնիզացիալի յենթարկել միայն մի ճյուղի հիման վրա։ Պոլիտեխնիզմը պետք է կառուցվի զանազան արտադրությունների կարևորագույն արդյունաբերության պրոցեսների կապակցությամբ։ Աշակերտների պոլիտեխնիկական ուսուցումն կազմակերպել արտադրության միայն մի ճյուղի հիման վրա—դա հենց այն ե, վոր կապված ե պրոֆեսիոնալիզացիալի հետ»։

Այս նույնն ե ապացուցում ընկ. Կրուպսկայան պոլիտեխնիզացիալի գործնականորեն կիրառման մասին գրելիս¹. «Գործութամյակի արտադրական աշխատանքների ուսումնասիրությունը պետք է սկսել այն արտադրությունից, վորին ամրացված ե դպրոցը, (վորին ինչպես այժմ անվանում են «մալը» (матерниковое) արտադրություն։) Բացի «մալը» արտադրությունից անհրաժեշտ ե նաև մի այլ արտադրության խոր ուսումնասիրություն, վորի հետ դպրոցը նույնպես որդանապես կապված պիտի լինի»... այնուհետև նա տվելացնում ե, «ինչ վերաբերում ե հետագա այլ արտադրություններին, գուցե կարելի կլինի ծանոթանալ նրա վորոշ ցեխերի աշխատանքների հետ»։

Ինչպես ցուց են տալիս ընկ. Կրուպսկայալի այս տողերը, դպրոցը պետք է անպայման ծանոթանա մի քանի արտադրությունների հիմնական

¹ На путях к новой школе, № 8—9, 1930 г.

ճյուղերի հետ և վոչ թե միայն մի արաւադրության հետ, ինչպես կարծում ե ընկ. Սանթրոսյանը:

Այս բոլորից չպետք ե լեզրակացնել և այն, վոր մենք պետք ե սպասենք մինչև լերկիրն ամբողջապես մեքենալացման լենթարկվի և հետո անցնենք դպրոցի պոլիտեխնիկացիալի գործին: Ընկ. Լենինը Ստեղանովի ելեկտրոֆիկացիալի մասին գրքութիւնի առաջաբանում գրում ե. «Մենք պետք ե յուրաքանչյուր ելեկտրական կայան դարձնենք յուրահատուկ ելեկտրական կայան դարձնել գիտություն տարածող կենտրոն: Վոչ միայն ելեկտրականությունը, այս յուրաքանչյուր տրակտոր, յուրաքանչյուր գործարան և այն բոլորը, ինչ վոր մեր շրջապատում կապված ե տեխնիկալի հետ, ինչ վոր պատկերացում ե տալիս նրա մասին, պետք ե ոգտագործել ամբողջապես»:

Նույնը գրում ե կրուպսկայան. «Պոլիտեխնիկացիալի համար մենք պետք ե ոգտագործենք ամբողջ մանրամասնությամբ այն բոլորը, ինչ հնարավոր ե. կա մեքենա, պետք ե ոգտագործել պոլիտեխնիկացիալի համար, տրակտոր կա, տրակտորը ոգտագործել, բացատրելով նրա ամբողջ ներքին կառուցվածքը և ցուց տալ, թե ինչ ե նա: Յուրաքանչյուր լերկաթգծի կայարան պետք

Ե դարձնել լուրահատուկ դպրոց։ Մարքսը խոսում
եր չբաղացի, ժամացուցի և նրանց նշանակու-
թյան և դերի մասին—տեխնիկալի պատմության
համար։ Նրանց պետք ե ոգտագործել նաև պոլի-
տեխնիկական կրթության նպատակների համար»։

Այս ցիտատները պարզ ցուց են տալիս, վոր
պոլիտեխնիկական կրթության գործը պետք է
կազմակերպել նույնիսկ այն վայրերում, ուր ար-
տադրությունը զարգացած չե։

ՄԱՍՍԱՅԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՈԼԻՏԵԽՆԻ-
ԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պոլիտեխնիկական կրթության գործը կազմա-
կերպել անկարելի և անհնարին և միայն լուսոր-
դանների ուժերով։ այդ խնդիրը լուծելու համար
անհրաժեշտ ե պոլիտեխնիկական կրթությունը
դարձնել լայն սոցիալ-քաղաքական պրոբլեմ։
Առաջին հերթին անհրաժեշտ ե մասսալի նախա-
ձեռնությունը, վորի համար պետք ե մասսալա-
կանացնել պոլիտեխնիզմի գաղափարը, հասկաց-
նել բանվորությանը պոլիտեխնիզմի ելությունն
ու դասակարգավիճ բնույթը, ցուց տալ, մանրա-
մասն, նրանց անելիքները։ Միայն մասսաների
և դպրոցի մերձեցմամբ կարելի լե ստեղծել պո-
լիտեխնիկական դպրոցը։

Ծովուսավորության առաջին համագումարում

ընկ. Լենինը իր ճառում ասել է. «Այսուհետեւ
մեր դպրոցը, ստրկության շղթալից ազատված
ժողովրդի հետ միասին, կընթանա սոցիալիզմի
ուղիով, այսինքն բանվոր դասակարգի, աշխա-
տավորության լայն մասսալի հետ միասին—դրա-
բոցը կզնա սոցիալիզմի ուղիով»:

Դպրոցը պոլիտեխնիկացիալի լենթարկելու հա-
մար անհրաժեշտ ե միասնական պլան. լուրա-
քանչյուր կազմակերպություն իրեն առջև կոնկ-
րետ խնդիր սկսի դնի, թե ինքն ինչ կարող ե
անել դպրոցի պոլիտեխնիկացիալի համար և ձգտի
իր ծրագիրը կապել մյուս հիմնարկների ծրագրի
հետ, ինչպես ասում ե Կրուպսկայան. «Ցեֆե բան-
վորները, արհմիություններն ու տնտեսագետնե-
րը այս ասպարիզում միահամուռ ուժերով, միա-
սին չաշխատեն, ապա մենք այս ճակատում լեր-
կար կթփրտանք, մինչ կմտնենք այն ուղին, վո-
րը մեզ հնարավորություն կտա մեր սոցիալիս-
տական վերակառուցումը հասցնել իր ցանկալի
վախճանին», հետո ավելացնում ե. «Իմ զեկուց-
ման նպատակն եր ընդգծել, վոր բանվորական
մասսաները, արհմիությունները, վորոնք որդա-
նապես կապված են այդ մասսաների հետ, և
տնտեսագարները (խօզյացենիկ), վորոնք, իհար-
կե, վոչ մի բոպե չեն կարող մոռանալ, վոր ի-
րենց աշխատանքը տեղի լի ունենում խորհրդա-

լին լերկըում, վոր վերակառուցման ալդ աշխատանքը, վորը վառ սոցիալիստական քնութիւն ե կըում... դրանք բոլորը պետք ե անմիջական մասնակցություն ունենան դպրոցի պոլիտեխնիկացիալի գործում—նրա բոլոր աստիճաններում»։ Անհրաժեշտ ե մանավանդ տնտեսավարների մասնակցությունը, ինչպես ավելացնում ե նա—«իսկ դպրոցի պոլիտեխնիկացիալի գործը նրանց անմիջական (կровное) սլարտականությունն ե»։

Ցուրաքանչյուր գործարանում անհրաժեշտ ե կազմակերպել պոլիտեխնիկացիալի շատար, վորը պարզ, կոնկրետ ծրագիր պիտի ունենա։ Շտաբն առաջինը պետք ե մտածի դպրոցի արտադրական աշխատանքների կազմակերպման մասին, քննության առնի դպրոցի ծրագիրը լայն բանավորական ժողովներում, դպրոցի արհեստանոցների կազմակերպմանը նյութական աջակցություն ցուց տա, դեկավարի ալդտեղի աշխատանքները։ Գործարանը մեծ ոգնություն կարող ե ցուց տալ նույնիսկ իրեն արդեն անպետք, չգործադրվող իրերով։ Շտաբը ոգնություն կարող ե ցուց տալ նաև ուսուցչությանը, վորը դեռ նոր ե սկսել ծանոթանալ ալդ աշխատանքներին։ Այստեղ հարկավոր ե փոխադարձ ոգնություն։ ուսուցչությունը բանավորներին պետք ե սովորեցնի, թե ինչպես մոտենալ աշակերտին, ինչպես նրանց ցուց-

մունքներ տալ, իսկ բանվորությունը ուսուցչությանն ողնի՝ լավ ուսումնասիրելու և ծանոթանալու գործարանի հետ:

Բացի շտարից, գործարաններին կից, անհրաժեշտ ե կազմակերպել կամավոր բրիգադա, վորակալ աշխատողներից, վորոնք պետք ե անմիջապես մասնակցեն մանկավարժական աշխատանքներին, զեկավարեն աշակերտների արհեստանոցավին աշխատանքները, նրանց տեխնիկական խմբակները, եքսկուրսիաները և այլն:

Ի՞նչ են անում պրոֆմիությունները պարտադիր ուսման ու պոլիտեխնիզացիայի համար. նրանց աշխատանքներում դեռ գդալի բեկում չկատավում, այնինչ նրանց անելիքները շատ խոշոր են:

Պրոֆմիությունները առաջին հերթին պետք ե կազմակերպեն մասսայի շարժումը՝ պարտադիր ուսման և դպրոցի պոլիտեխնիզացիայի նկատմամբ:

Դպրոցի պոլիտեխնիզացիայի պալքարում պրոֆկազմակերպությունների աշխատանքները հագեցած պետք ե լինեն պալքարով հանուն պոլիտեխնիզացիայի, պետք ե ձեռնարկել մասսայական պրոպագանդա. պոլիտեխնիզացիայի գաղափարները դեռ մասսայականացված չեն: Մասսան դեռ չգիտե, թե ինչ ե պոլիտեխնիզմը, չեն հասկա-

նում նույնիսկ շատ պրոֆաշխատողներ։ Անհրաժեշտ ե առաջին հերթին պատրաստել ակտիվ և զեկուցումներ տալ բոլոր կոլեկտիվներում, քննության առնել ալդ խնդիրը։

Նրանք կազմակերպում են բանվորական կոնտրոլ պոլիտեխնիկական դպրոցի վրա, մոբիլիզացիայի լեն լենթարկում վորակալ արտադրական ակտիվը, հարվածալիններին, կազմակերպում են նրանց, նախապատրաստում՝ ոգնելու պոլիտեխնիկական դպրոցին։

Պրոֆկազմակերպությունները, ժողովրդական կրթության որգանների հետ միասին, կազմակերպում են զանազան ձեռնարկումներ, աշխատանքի լրացուցիչ նոր սիստեմներ և նյութապես մասնակցում են դպրոցի շինարարությանը։

Պրոֆմիությունների խնդիրը պետք է հանգի այն բանին, վոր ակտիվ կերպով ոժանդակեն դպրոցներին՝ տնտեսավարներից անհրաժեշտ կահավորություն և միջոցներ ստանալու։ Ալգոլիսի փորձեր արդեն կան Ռուսաստանում, որինակ, տեքստիլշիկների Կեն 1 միլ. ռուբլի յի ստացել՝ գործարանավին լոթամակ կառուցելու։

Պրոֆմիությունները պետք է վերցնեն դպրոցների շեֆությունը, սոցմրցման պայմանագրեր կնքեն, հավաքական պայմանագրեր կազեն, նրանք պետք են հսկեն, վոր տնտեսավարներն իրենց վրա

վերցրած պարտականությունները ճշտությամբ
կատարեն:

Բացի դպրոցը պոլիտեխնիզացիալի լենթարկե-
լուց, անհրաժեշտ ե նաև սկսել զարգացնել ար-
տադպրոցական աշխատանքի և պոլիտեխնիկա-
կան դաստիարակության հիմնարկների ցանցը,
վորոնք նույնպես հզոր միջոց պետք ե հանդի-
սանան կոմունիստական դաստիարակության ազ-
դեցությունը տարածելու անկազմակերպ լերեխա-
ների վրա: Այդ նպատակով անհրաժեշտ ե ամեն մի
պիոներ-տան, խրճիթ-ընթերցարանին, կոլխոզին,
խորհանտեսության կից կազմակերպել մանկական
տեխնիկական կալաններ, թեկուզ քիչ (փոքրա-
թիվ) գործիքներով ու կահավորությամբ:

Լավ կլինի դպրոցներն ու պիոներական կոլեկ-
տիվները կազմակերպեն շարժական բանվորական
սենյակներ և ոգտագործեն զանազան գյուղերում
ու դպրոցներում՝ ակմբային որերին:


Խոշոր դպրոցներին կից պետք ե կազմակեր-
պել մեքենաացման լենթարկված արհեստանոց-
ներ, ուր կկազմակերպվի կոնսուլտացիա՝ մյուս
դպրոցների և շարժական սենյակների համար:

Պոլիտեխնիզացիալի գործի կազմակերպման հա-
ջողությունը խոշոր չափով կախված ե ուսուցիչ-
ների պոլիտեխնիզացիալի վերապատրաստման աշ-
խատանքներից: Այդ խնդիրը հանդիսանում է պո-

լիտեխնիզացիալի գլխավոր կետերից մեկը։ Անհրաժեշտ ե նրանց համար վերապատրաստման կուրսեր բանալ, գործնականում ծանոթացնել արտադրական աշխատանքների հետ և այլն։

Պոլիտեխնիզմը կանոնավոր հիմքերի վրա դնելու համար, արտադրության վորակլալ բանվորներից առաջ պիտի քաշվեն իրքև դպրոցի վարիչներ, կցվեն դպրոցներին և նշանակվեն աշխատանքի տեսուչներ։


Կոմիտեի հումանիզմական կազմակերպությունը ակտիվ կերպով պետք է մասնակցեն դպրոցի պոլիտեխնիզացիալի աշխատանքների բոլոր բնագավառներին—հանդիսանալով նոր ձեռնարկումների ավանդարդը, լավ գիտակցելով, փոր պոլիտեխնիզմը խոշոր անտեսական-քաղաքական ձեռնարկումն է։




ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1.	Վորակյալ բանվորի առանձնահատկությունները	3
2.	Արտադրության դաստիարակչական նշանակությունը	7
3.	Պոլիտեխնիկական դաստիարակության ելությունը	9
4.	Աշխատանքի և պոլիտեխնիկական դպրոցի տարբերությունը	16
5.	Պոլիտեխնիկական կրթությունը վորպես սոցիալական դաստիարակություն	18
6.	Պոլիտեխնիկական կրթության գործնական կիրառումը	19
7.	Պոլիտեխնիզմը գործարանալին յոթամյակում	24
8.	Արհեստանոցի նշանակությունը և նրա կազմակերպման ձևերը	30
9.	Պոլիտեխնիկական կրթության կիրառման ընթացքում առաջացող վտանգավոր յերեվութները	34
10.	Մասսայի մասնակցությունը պոլիտեխնիկական դպրոցի կազմակերպման գործում	40





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039077

(094)

!

767

A 1
4476

Գիմը 12 կոշ. ($1\frac{1}{2}$ մ.) մաս.



В. Аствацатрян

К ПОЛИТЕХНИЧЕСКОЙ ШКОЛЕ

Госиздат ССР Армении

Эревань, 1930 г.
